ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ
ՌՈՅԱԼԹԻՆԵՐԻՑ
ՀԱՄԱՅՆՔԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Քաջարան համայնքի ղեկավար **Մ. Փարամազյան**

ՔԱՋԱՐԱՆ 2025

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝

- **ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ**
- **ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ**

ՆՊԱՏԱԿ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ

Խնդիր 1 Նպաստել հողերի օգտագործման արդյունավետության ու ագրոբիզնեսի արտադրողականության բարձրացմանը

Միջոցառում 1 Գյուղատնտեսական մեքենա-սարքավորումների ձեռք բերում

Նախատեսվում է ձեռք բերել փոքր (35-40 ձ.ու.) և միջին (70-80 ձ.ու.) հզորության անվավոր տրակտորներ

Միջոցառում 2 Գյուղատնտեսական մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկման կայանի կառուցում

Նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները.

1. Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում, փորձաքննություն
2. Ընդհանուր շինարարական աշխատանքներ

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Քաջարան համայնքը 2017թ. խոշորոցումից հետո ընդգրկում է 20 գյուղական բնակավայր, որոնցից 17-ը լեռնային ու բարձր լեռնային փոքր գյուղեր են:

Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերից 167 հա վարելահող է, 665 հա-ը՝ խոտհարք, 17,0 հազ հա՝ արոտ: 167 հա վարելահողից մշակվում է ընդամենը 32%-ը, խոտհարքներից օգտագործվում է 25 %-ը, արոտների՝ 41%:

Աճեցվող հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերը ՝ կարտոֆիլ, լոբի (մշակվող ցանքատարածությունների 90%-ը): Քիչ քանակությամբ, առավելապես ընտանեկան սպառման համար, մշակվում են նաև բանջարաբոստանային կուլտուրաներ:

Ցածր է նաև միջին բերքատվությունը: Օրինակ՝ կարտոֆիլի բերքատվությունը 2-2,5 անգամ ցածր է հանրապետական միջինից:

Անասնապահությունը ևս ցանկալի մակարդակում չէ. խոշոր եղջերավորների գլխաքանակը՝ 300, մանր եղջերավորներինը՝ 2000, այն դեպքում, երբ առկա արոտավայրերի ու խոտհարքերի

մակերեսները հնարավորություն են տալիս բազմակի անգամ ավելացնել անասնապահության ծավալները:

Նկատի ունենալով, որ համայնքի տնտեսությունը միաբևեռ է, նրա դիվերսիֆիկացումը համայնքապետարանի համար առաջնահերթ խնդիր է: Տնտեսության ճյուղերից մեկը, որի զարգացման համար հնարավորություններ ունի համայնքը, գյուղատնտեսությունն է:

Իրավիճակի գնահատումն ու գյուղացիների շրջանում կատարված հարցումները ցույց են տալիս, որ վերը նշված իրավիճակի պատճառներից մեկը գյուղատնտեսական մեքենաների սակավությունն ու որոշ տեսակների՝ բացակայությունը: Լեռնային բարդ, կտրտված ռելիեֆով տարածքում անհամեմատ դժվար ու բարդ է հողի մշակման աշխատանքը, և հատկապես երիտասարդները դժվարությամբ են կապում իրենց ապագան գյուղատնտեսության հետ: Արդյունքում՝ դատարկվող լեռնային, նաև սահմանապահ գյուղեր, համայնքի տնտեսության առավել բևեռացում, պարապ մնացող հողեր, աղքատության խորացում:

Առկա և ձեռք բերվող գյուղատնտեսական մեքենաների պահպանումը, սպասարկումը, շահագործումը, գյուղացիներին մատուցվող ծառայությունները արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է գյուղատնտեսական մեքենարների տեխնիկական սպասարկման կայան (ՄՏԿ) ունենալ:

ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Գյուղացիները կստանան նոր և ավելի որակյալ տեխնիկական ծառայություններ ստանալու հնարավորություն
- Համայնքապետարաը հողերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու հնարավորություն կստանա
- Մշակվող վարելահողերի մակերեսը 50%-ով ավելացնելու հնարավորություն
- Հողերի բերքատվությունը 50%-ով ավելացնելու հնարավորություն
- Գյուղատնտեսության ոլորտում նոր ներդրումներ ներգրավելու կարողություններ կավելանան
- 12 լեռնային և բարձրլեռնային գյուղերի գյուղացիական տնտեսությունները արտադրողականությունը բարձրացնելու հնարավորություն կստանան
- Կբարելավվի համայքի բնակիչների պարենային ապահովվածությունը
- Կբարելավվի անասնապահության կերային ապահովվածությունը

  - 600 մ^2 ընդհանուր և 170 մ^2 աշխատանքային մակերեսով տեխ.սպասարկման կայան
  - Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման, պահպանման և սպասարկան արդյունավետության բարձրացում

Միջոցառումը համապատասխանում է ՀՀ կառավարության 01.09.2022թ. 1370-Ն «Համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները» որշման 2.1 կետի դրույթերին:

ՆՊԱՏԱԿ 2 ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՆՍԱՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Խնդիր 1. Համայնքի բնակավայրերի կանաչ տնկարկների բարեկարգում և ընդլայնում

Միջոցառում 1 Քաջարան քաղաքի Շիրվանզադե փողոցի մանկական զբոսայգու վերակառուցում

Նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները.

1. Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում, փորձաքննություն
2. Ընդհանուր շինարարական աշխատանքներ
3. Տարածքի կանաչ պլանավորում
4. Տարածքի կահավորում

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Կանաչ տնկարկները կարևոր գործոն են հանդիսանում քաղաքի բնակիչների կյանքի համար էկոլոգիական, միկրոկլիմայական, սանիտարահիգիենիկ լավագույն պայմանների ստեղծման, քաղաքի կուլտուրական լանդշավտի ձևավորման գործում:

Քաջարան քաղաքի համար, որպես լեռնահանքային արդյունաբերության խոշոր կենտրոնի, առանձնակի է կարևորվում կանաչ տնկարկների դերն ու նշանակությունը: Քաջարան քաղաքի կանաչապատման մակարդակը չի համապատասխանում ՀՀ կառավարության 08.02.2018թ թիվ 108-Ն որոշմամբ հաստատված բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և կազմությանը ներկայացվող պահանջներին, մասնավորապես՝ ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների տարածքը մեկ բնակչի հաշվով կազմում է 1.2 մ^2, մոտ 7 անգամ փոքր է սահմանված նորմայից:

Կանաչ տնկարկների սանիտարահիգիենիկ դերը՝ որպես վնասակար գազերից, ծխից և հատկապես փոշուց ու աղմուկից պաշտպանվելու միջոց, թույլ է դրսևորվում արտադրական և բնակելի կառուցապատված հատվածների միջև կանաչ պաշտպանիչ գոտու բացակայության, ճանապարհների ու փողոցների թույլ կանաչապատվածության պատճառով:

Հաշվի առնելով քաղաքի կառուցապատված հատվածի տարածքի փոքրությունը և հետագա ընդլայնման հնարավորությունների բացակայությունը, բարդ ռելիեֆը, առաջնային են դառնում առկա կանաչ տնկարկների (հատկապես՝ ընդհանուր օգտագործման) պահպանումն ու վերականգնումը,քաղաքի էկոլոգիական պայմանների բարելավման գործում դրանց դերի ու նշանակության, դրանք ըստ իրենց գործառնական նշանակության օգտագործման հնարավորությունների մեծացումը:

Շիրվանզադե փողոցի զբոսայգին քաղաքի միակ մանկական զբոսայգին էր (այն նաև քաղաքի ամենամեծ ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքն է, մոտ 5000 մ2 մակերեսով), որտեղ կապիտալ աշխատանքներ վերջին անգամ իրականացվել են 1980-ական թվականների կեսերին: Գոյություն ունեցող զվարճալիքներն ու ջրային մակերեսները չեն գործում,անցուղիները քանդված են և հավելյալ վտանգ են ներկայացնում երեխաների համար, նստարաններ չկան, բացակայում է արհեստական լուսավորումը, տնկարկի կազմությունը չի համապատասխանում նորմերին և թարմացման կարիք ունի:

ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. 3500 մ^2 մակերեսով բարեկարգված հանրային տարածք (մանկական զբոսայգի), այդ թվում՝
   - *2500 մ^2 մակերեսով վերականգնված կանաչ տնկարկ՝ հին տնկարկների բարելավմամբ և նոր, ֆունկցիոնալ կանաչապատմամբ,*
   - *զվարճալիքներ (կարուսելներ)*
   - *ջրային մակերես*
   - *արդիական և էներգաարդյունավետ լուսավորություն*
   - *ժամանցի միջոցներ:*
2. Կապահովվի միաժամանակյա մինչև 70 մարդու այցելություն:
3. Քաղաքի և հյուրընկալված երեխաները լիարժեք և բովանդակային ժամանցի արդիական, անվտանգ և հաճելի հնարավորություն կստանան:
4. Նշված պուրակի կառուցմամբ կիրականացվի նաև քաղաքային կանաչ տնկարկների համակարգի ձևավորման սկզբունքներից մեկը՝ փոխկապակցվածությունն ու անընդհատությունը. փոխկապակցվածություն կստեղծվի քաղաքի կենտրոնական պուրակի, ստեղծվող պուրակի առկա մարզահրապարակի միջև:

Միջոցառումը համապատասխանում է ՀՀ կառավարության 01.09.2022թ. 1370-Ն «Համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները» որոշման 2.9 կետի դրույթերին:

ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ/ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

		2023				2024											
1	**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱ-ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ**	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
	Գնման գործընթացի նախապատրաստում																
	Մրցույթի կազմակերպում																
	Ձեռք բերման/պայմանագրի կատարման ընթացք																
	Նախատեսված ապրանքների ընդունում																
	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱ-ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ																
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների գնման գործընթացի նախապատրաստում																
	Ծառայության գնման մրցույթի կազմակերպում																
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ընթացք																
	Ծառայության արդյունքի ընդունում																
	Շինարարական աշխատանքների գման գործընթացի նախապատրաստում																
	Մրցույթի կազմակերպում																
	Շինարարական աշխատանքներ																
	Աշխատանքների արդյունքի ընդունում																
2	**ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԻՐՎԱՆԶԱԴԵ ՓՈՂՈՑԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՁԲՈՍԱՅԳՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ**																
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների գնման գործընթացի նախապատրաստում																
	Ծառայության գնման մրցույթի կազմակերպում																
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ընթացք																
	Ծառայության արդյունքի ընդունում																
	Շինարարական աշխատանքների գման գործընթացի նախապատրաստում																
	Մրցույթի կազմակերպում																
	Շինարարական աշխատանքներ																
	Աշխատանքների արդյունքի ընդունում																

Հաստատում եմ
Քաջարան համայնքի ղեկավար Մ. Փարամազյան

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ՌՈՅԱԼԹԻՆԵՐԻՑ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵ

2025թ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

	Ծրագրի միջոցառումների անվանումը	Միջոցառումների հիմնական ցուցանիշները				Ֆինանսավորման ծավալները, *հազ. ՀՀ դրամ*			
		Չափի միավոր	Միավորի արժեք *հազ" դրամ*	Քանակ	Ընդհանուր գումար *հազ" դրամ*	1-ին եռ	2-րդ եռ.	3-րդ եռ.	4-րդ եռ.
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱ-ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ					**21500,0**		**21500,0**		
	անվավոր տրակտոր, 35-40 ձու	հատ	6000,0	1	**6000,0**		6000,0		
	անվավոր տրակտոր, 70-80 ձու	հատ	15500,0	1	**15500,0**		15500,0		
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԿԱՆ ՄԵՔԵՆԱ-ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ					**19100,0**	**980,0**		**18120,0**	
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում	փաթեթ	800,0	1		900,0			
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն	ծառայ.	80,0	1		80,0			
	Շին. տեխնիկական հսկողություն	ծառայ.	350,0	1				350,0	
	Շին. հեղինակային հսկողություն	ծառայ.	100,0	1				100,0	
	Համաշինարարական աշխատանքներ	ըստ նախագծի	17770,0	1				17770,0	

ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԻՐՎԱՆԶԱԴԵ ՓՈՂՈՑԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ					**149463,6**		**4300,0**	**82000,0**	**63163,6**
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում	փաթեթ	4000,0	1	**4000,0**		4000,0		
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն	ծառայ.	300,0	1	**300,0**		300,0		
	Շին. տեխնիկական հսկողություն	ծառայ.	3000,0	1	**3000,0**			2000,0	1000,0
	Շին. հեղինակային հսկողություն	ծառայ.	1200,0	1	**1200,0**				1200,0
	Համաշինարարական աշխատանքներ	ըստ նախագծի	155000,0	1	**140963,6**			80000,0	60963,6
	ԸՆԴԱՄԵՆԸ				**190063,6**	**980,0**	**25800,0**	**100120,0**	**63163,6**

1.**«Քաջարան քաղաքի Շիրվանզադե փողոցի մանկական զբոսայգու վերակառուցում» ծրագրի գները հաշվարկել ենք՝**

- առաջնորդվելով

- ՀՀ քաղաքաշինության նախարարի «Քաղաքաշինական փաստաթղթերի (ծրագրային եվ ճարտարապետաշինարարական) մշակման աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը հաստատելու մասին» 2008թ. 19-Ն հրամանի դրույթներով,
- ՀՀ քաղաքաշինության նախարարի «ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների եվ շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուն հաստատելու մասին» 2008թ 09-Ն հրամանի դրույթներով

- հիմք ընդունելով

- 2019-2023թթ Քաջարանի համայնքապետարանի կողմից սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացված պուրակների, խաղահրապարակների, մարզահրապարակների կառուցման/վերակառուցման (10 օբյեկտ, ընդհանուր 9500 մ², 480,0 մլն դրամ ընդհանուր նախահաշվային արժեքով) շինարարական աշխատանքների գների միջինացված ցուցանիշները:

2"«Գյուղատնտեսական մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկման կայանի կառուցում» ծրագրի գները հաշվարկել ենք՝

- առաջնորդվելով

- ՀՀ քաղաքաշինության նախարարի «Քաղաքաշինական փաստաթղթերի (ծրագրային եվ ճարտարապետաշինարարական) մշակման աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը հաստատելու մասին» 2008թ. 19-Ն հրամանի դրույթներով,
- ՀՀ քաղաքաշինության նախարարի «ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների եվ շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուն հաստատելու մասին» 2008թ 09-Ն հրամանի դրույթներով,

3" «Գյուղատնտեսական մեքենա-սարքավորումների ձեռք բերում» ծրագրի գները սահմանել ենք՝

- հիմք ընդունելով

- գյուղատնտեսական տեխնիկայի ներկրմամբ և վաճառքով զբաղվող ընկերությունների գնահարցումների արդյունքները, մասնավորապես՝ «Հրաշք Այգի» ՍՊԸ hrashkaygi.am, «Սպեցմաշ» ՍՊԸ specmash.am, «ՄԻԳ մոթորս» ՍՊԸ migmotor.am:
- համանման ապրանքների՝ պետության և համայնքների կողմից կատարված գնումների ընթացակարգերի ուսումնասիրության արդյունքները (armeps.am, gnumner.am):

Տնտեսական զարգացման պատասխանատու *Գ. Գաբրիելյան*

ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք :
2. ՀՀ կառավարության «Համայնքայի մասհանումների ծախսման ծրագիրը կամ ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը սահմանելու մասին» 01.09.2022թ № 1358-Ն որոշում:
3. ՀՀ կառավարության «Համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները հաստատելու մասին» 01.09.2022թ. № 1370-Ն որոշում:
4. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք :
5. Քաջարան համայնքի զարգացման 2023-2027 թթ ծրագիր: